

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

30.06.2017 16:45



Հունիսի 30-ին Արցախի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փորձագիտական խումբը ներկայացրել է ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ մասնագիտական կարծիքը: 2016 թվականին ձևավորված Պալատի փորձագիտական խումբն ուսումնասիրել և հաշվետվության տեսքով մի գործույկում է գետեղել Արցախի հիմնախնդրին, ապրիլյան պատերազմից միջազգային իրավական հետևանքներին, Ադրբեջանի կողմից պատմությունը խեղաթյուրելուն միտված քաղաքականությանն առնչվող հիմնահարցեր:

Լրագրողների հետ հանդիպման ընթացքում Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նշել է, որ հմբի ստեղծումը պայմանավորված է ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի խաղաղ բնակչության և պաշտպանության բանակի զինվորների նկատմամբ 2016 թվականի ապրիլի 2-ից 5 ն ընկած ժամանակահատվածում կատարված դաժանությունների միջազգային իրավական գնահատական տալու անհրաժեշտությամբ:

Խմբի անդամ փաստաբան Արա Խզմալյանը խոսել է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի մասին՝ ընդգծելով, որ արցախահայության ինքնորոշման իրավունքը վաղուց պատմականորեն հիմնավորված է:

«Հարցերից ամենահինը կապված է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրավական պահանջի հետ: Հանգամանքները, որոնք հիմք են ստեղծում ինքնորոշման համար, կապված են նաև 88-ի թվականի զարգացումների հետ, երբ տեղի են ունեցել Բաքվի, Սուվալյիթի ջարդերը, Արցախի էթնիկ գտումները: Սրանք արդեն իսկ իրավական տեսանկյունից հիմնավորել են ինքնորոշման պահանջը, քանի որ այս հանգամանքների ուժով, Արցախի ժողովրդի ինքնորոշումն Ադրբեջանի սահմաններում դարձել է անհնար: Ազգությամբ հայի անվտանգությունը անիրատեսական է Ադրբեջանի տարածքում», - ասել է նա:

Բանախոսները նկատել են, որ ապրիլյան պատերազմից հետո Ադրբեջանում ուժեղացվում է հայատյացության քաղաքականությունը:

Փորձագիտական խմբի անդամ, փաստաբան Տարոն Սիմոնյանը փաստել է.


«Ադրբեջանը, լինելով մի շարք պայմանագրերի կողմ, ստորագրելով ռասիստական քաղաքականության դեմ պայքարի համաձայնագրեր, խախտում է դրանք: Պետությունից պահանջվում է, որ նախաձեռնեն գործողություններ ռասիստական քաղաքականության դեմ, սակայն իրենք ոչ միայն նման քաղաքականություն են վարում, այլև նախաձեռնում են, ինչը բազմաթիվ փաստերով առկա է»:

Նման վարքը բանախոսներն անվանել են Ադրբեջանի պետական քաղաքականության հետևանք, նշելով, որ հայատյաց քաղաքականությունը տարվում է ոչ միայն նախագահի մակարդակով այլ ՀԿ-ների և ՋԼՄ-ների:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը լրագրողներին ասել է, որ հուլիս ամսին ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ մասնագիտական կարծիքը թարգմանվելու է անգլերեն լեզվով և ուղարկվելու է միջազգային կառույցներին, Հայաստանում արտերկրյա դեսպանատներին, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի եվրոպական գործընկերներ կառույցներին:

Բեռնել զեկույցը







Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })